

Սուսաննա Գ. Հովհաննիսյան
Բանաս. գիյո. դոկտոր

ՄԵԾԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Մաս երկրորդ: Հովհաննես Թումանյանը և Միմոն
Զավարյանի գաղափարական ժառանգությունը*

Մուտք

Ուսումնասիրության առաջին մասում մենք ներկայացրինք 20-րդ դարի հայ ազգային երկու մեծությունների՝ Միմոն Զավարյանի և Հովհաննես Թումանյանի սրտակից բարեկամության ու գործակցության այն դրվագները, որոնք առնչվում էին ՀՅ Դաշնակցության քաղաքական պայքարին և հայ մշակույթի հիմնախնդիրներին, արձանագրեցինք նրանց մարդկային բնավորությունների տարբերություններն ու ընդհանրությունները և միաժամանակ՝ հոգևոր ազգակցությունը, ինչը պայմանավորեց ազգային ժառանգության պահպանման նպատակով նրանց համատեղ աշխատանքը:

Իրենց պայքարում Հ.Թումանյանն ու Ս. Զավարյանը միայնակ չէին: Առաջին հայացքից հրաշք է թվում, որ Հովհ. Թումանյանը, Ավ.Խահակյանը, Վահան Տերյանը, Բ.Վարուժանը, Շանթը, Միամանթոն, Զոհրապը, Զարենցը, Կոմիտասը և այլք ժամանակակիցներ էին՝ նույն կամ գրեթե նույն սերնդի ներկայացուցիչներ: Հայ ժողովուրդը սեփական իմաստությամբ ու ներքին բնազդով զգացել էր, որ դրված է իր գոյության խնդիրը, իր գլխին կախված է նորից ոտքի կանգնելու, ազգ ու պետություն դառնալու կամ անհետանալու, ֆիզիկապես ոչնչանալու վտանգը: Նման պայմաններում նրա լինելության հաստատման գործը բոլոր ոլորտներում, այդ թվում նաև հասարակական-քաղաքական կյանքում մեծապես կախված էր հզոր անհատականություններից՝ ազգային գործիչներից: Եվ ինչպես ազգային կուսակցությունների առաջնորդների, այնպես էլ մշակույթի գործիչների՝ 20-րդ դարասկզբի պայծառ անունների համաստեղությունն ամենևին էլ պատահակա-նություն չէր: Նրանց բոլորի ծնունդը օրինաչափ անհրաժեշտություն էր:

* Ներկա և նախորդ հրապարակման հիմնական թեզերը ներկայացվել են Միմոն Զավարյանի մահվան 100-ամյակի առթիվ 2013 թ. հոկտեմբերի 23-ին տեղի ունեցած Գիտական նստաշրջանում: Ընդունվել է տպագրության 20.11.2013: 1

Ե (ԺԵ) քաղթ, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013
ՎԷՄ համահայկական հանդես

Ժամանակն առաջադրել էր նվիրյալների դերակատարության մեծ հրամայականը, և նրանք ոչ միայն չուշացան, այլև թիկունք կանգնեցին մեկ մեկու և բախտորոշ իրադարձությունների շրջանում զորակցեցին իրար:

Այս իմաստով նշանակալից էր հատկապես Զավարյանի կողմից ողջ կյանքի ընթացքում հավաքված «Հայր և Հայաստանը» կամ «Հայի Աշխատանքը» հայրենագիտական նյութերի ալբոմի նկատմամբ Թումանյանի վերաբերմունքը, ինչի վկայությունն էր երկու մեծ լռեցիների վերջին տարիների նամակագրությունը: Կյանքի մայրամուտն ապրող ընկերոջ հավաքած գանձերը պարզապես հայրենի հիշատակներ չէին, այլ հայրենիքի գոյության վավերականությունը հաստատող անհերքելի փաստեր:

1. Զավարյանի «Հայր և Հայաստանը» կամ «Հայի Աշխատանքը» ալբոմը և Թումանյանին հասցեագրված նամակները

Թումանյանի և Զավարյանի նամակագրությունը հավաստում է, որ նրանք կապված էին ոչ միայն հասարակական գործերի բերումով, կուսակցական կամ Ազգային բյուրոյի հրահանգներով, այլ նաև իբրև բարեկամներ, հայրենակից ընկերներ: Նրանց նամակների մեծ մասը չի պահպանվել. բացառություն են Զավարյանի՝ Թումանյանին հասցեագրված մեզ հայտնի երկու գրությունները (1913 թ. մայիսի 27, սեպտեմբերի 22)²: Դրանք, ինչպես նաև Զավարյանի մասին Թումանյանի երկու հողվածները վկայում են, որ գրողը քաջ ծանոթ է եղել իր հայրենակցի գործունեությանը, նրա՝ կուսակցական ընկերների հետ որոշ տարածայնություններին, սկզբունքայնությանը և ազնվության, անկեղծության ու ճշմարտախոսության բազում օրինակներին:

1913 թ. մայիսի 27-ին Զավարյանի գրած նամակից տեղեկանում ենք, որ մինչ այդ Թումանյանը Բաթումից Պոլիս հասցեագրած նամակով իր տպավորություններն է հայտնել ընկերոջը Բաթումում կատարվող դեպքերից և հանդիպումներից: Դժվար է ասել, թե գրողն ինչ նպատակով կամ ինչ խորհրդակցության մասնակցելու համար էր մեկնել Բաթում և միաժամանակ՝ թե՛ հուսադրվել ու թե՛ հիասթափվել: Սակայն, ըստ ամենայնի, դա տեղի էր ունեցել Ազգային բյուրոյի հանձնարարությամբ³, որի

2 Այս նամակները տեղ չեն գտել ժամանակին Բեյրութում լույս տեսած «Միմոն Զաւարեան» երեք սովարածավալ հատորներից և ոչ մեկում ու պահվում են Եղիշե Զարենցի անվան Գրականության ու արվեստի թանգարանի (ԳԱԹ) Թումանյանի ֆոնդում, N 978:

3 Ամենայն հավանականությամբ հանձնարարությունը եղել է անակնկալ: Հակառակ դեպքում Թումանյանը 1913 թ. մայիսի 2-ին չէր բացակայի Թիֆլիսից, երբ «Հայ գրողների կովկասյան ընկերությունը», որի նախագահն էր նա, նշում էր Հովհաննես Հովհաննիսյանի գրական գործունեության 30-ամյակը, և նա պետք է նախագահեր հանդիսավոր նիստին: Մինչդեռ ժողովը վարել է Տիգրան Հովհաննիսյանը և նախագահի անունից ներողություն է խնդրել նիստին չմասնակցելու համար: Տե՛ս ԳԱԹ, ԹՖ, N 978, մանրամասները տե՛ս նաև Մուսսաննա Հովհաննիսյան, Թումանյանը և «Հայ գրողների կովկասյան ընկերությունը», եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 246:

կենտրոնական կոմիտեի անդամն էր բանաստեղծը: Զավարյանի պատասխան նամակից կարելի է ենթադրել, որ Բաթումում քննարկվել են Արևմտյան Հայաստանում ակնկալվող բարենորոգումների խնդիրը և արևելահայության մոտեցումները: Թումանյանը պոետ էր, լավատես, ուստիև խանդավառվել էր որոշ արտաքին խոստումներից: Զավարյան գործիչը փորձել է մեղմել ընկերոջ ոգևորությունը՝ վստահ, որ բոլոր ժամանակներում ու պայմաններում յուրաքանչյուր անհատ ու ազգ հույսն առաջին հերթին իր վրա պիտի դնի:

Նա գրում էր. «Միրելի՛ Օհաննես,

Ուրախացա Բաթումից գրածդ երկտողիդ. «Տպավորություններին»: Այս գործնական դարի մեջ տալու չէ մեծ նշանակություն: Շատ ես հետ նայելու և ավելի մարդկանց գործերին, արարքների **արդյունքներին**, համենայն դեպս (որոշ նվազագույն մեր **անկապտելի** իրավունքների զարգացման գործնական երաշխիքների պայմանով) ցանկալի է մերձեցում, գուցե և կատարյալ հաշտեցում՝ մեր երաշխիքների հետ: Այսուհանդերձ մոռանալու չէ երբեք, որ մարդու բախտի **տնօրինողը** ամենից ավելի **ինքը մարդն է**, իր գիտակցությունը, ուժը: **Ուրիշի** արած բարեգործությամբ, տված ողորմածությամբ սնանկացած տնտեսությունը չի վերականգնվի: Շատերը մոռանում են այս էական **միտքը**»⁴ (ընդգծումը մերն է - Ս.Հ.):

Զավարյանը նախ՝ փորձում էր մեղմել Թումանյանի ոգևորությունը, այնուհետև շեշտում էր դրացի ազգերի հետ «կատարյալ հաշտեցման» և «մերձեցման» կարևորությունը՝ չմոռանալով վերստին ընդգծել սեփական ուժի հաշվառման անհրաժեշտությունը: Այս տեսակետը Զավարյանի կյանքում հաստատվել էր նրա կենսափորձով: Երբ Բալկանյան պատերազմի օրերին մեկնում էր Պետերբուրգ՝ բանակցությունների, ժամանակակիցների վկայությամբ՝ մեծ ակնկալիքներ չունեցող «Մազոտվների Ռուսաստանից», առանձնապես չէր հավատում դրսի որևէ օգնության. վստահ էր, որ Հայաստանի տնտեսությունը պետք է վերականգնվի հայ ժողովրդի ուժերով:

Մեզ հասած Զավարյանի՝ Թումանյանին ուղղված երկու նամակներում նամակագիրը մշտապես խոսք է բացել ազգային մշակութային իր մի նախաձեռնության մասին, հանուն որի տքնել էր երկար՝ ավելի քան 14 տարի և հաճախ էր զգացել հայրենակից ընկերոջ կարիքը:

Զավարյանը սկսել էր կազմել մի «**հատուկ գեղարվեստական ժողովածու՝ ալբոմ**»⁵ Սասունում, Կիլիկիայում, Տարոնում, Կովկասում իր գործունեության և ուղևորությունների ընթացքում լուսանկարած պատկերներից: Նա կատարում էր հայրենագիտական, տնտեսագիտական, պատմաքաղաքական և ազգագրական լուրջ հետազոտություններ հայրենիքի գրեթե բոլոր այն վայրերում, ուր լինում էր: Կուսակցական աշխատանքից բացի, ուսումնասիրել և մեծաքանակ նյութ էր հավաքել ողջ Հայաստանի տնտեսական ու ազգագրական վիճակի մասին:

4 Նամակը հրապարակվում է առաջին անգամ: Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԹՖ, N 1173 (հին համարը՝ 978):

5 «Հորիզոն», օրաթերթ, Թիֆլիս, 1913, N 248, 3 նյութերի:

Նիկոլ Աղբալյանին Օդեսայից Եգիպտոս ուղղած 1906 թ. հունվարի 25-ի նամակում Զավարյանը գրում էր. «Շրջանների մասին ընդհանուր տեղեկություններ առնելուց յետոյ (վիճակագրական, տնտեսական և այլն), ես աշխատում եմ ուսումնասիրել մէկ կամ երկու **տիպիքական** գիւղ այդ շրջանում, հայ թե ոչ հայ...Յետոյ աշխատում եմ կազմել նոյն գիւղի մի (կամ անելի լաւ է՝ մի քանի տեսակ) **տիպիքական** ընտանիքի բիւջէն»⁶ (ընդգծումը մերն է-Ս.Հ): Նա հավաքում էր վիճակագրական տվյալներ 1901-1905 թթ. ժամանակահատվածում որևէ ընտանիքի ունեցվածքի, մեկ տարվա ծախսերի ու եկամուտների մասին, գրի էր առնում գյուղերի անունները, կլիմայի, բնության առանձնահատկությունները, ճանապարհների վիճակը, գյուղացիների զբաղմունքը, ազգաբնակչության քանակի հետ կապված վիճակագրական տվյալները, դպրոցականների քանակը, գաղթականության թվաքանակը, հողատիրության ու հողագործության, անասնապահության ու տնայնագործության տեսակները, հարկերն ու տուրքերը, նույնիսկ «ոչ օրինական վճարելիքները՝ կաշառք, քրդերին, վանքերին»⁷, 1895-1996 թթ. կոտորածների հետևանքները և ազգաբնակչության տրամադրությունները:

Նույն շրջանում (1906 թ. հունվարի 25) Զավարյանը Օդեսայից Ալեքսանդրիա՝ Կարապետ Փաշայանին (Թափառիկ) ուղղված նամակում «նորից» խնդրում էր ուղարկել «Խմբագրատնից մեր հրատարակած բոլոր հին և նոր պատկերներից»⁸: Նա մտադիր էր ալբոմի հրատարակության հասույթը հատկացնել «Կարմրապսակ Սասունին»:

Այս ցանկությունն ամրապնդվեց 1911 թ. Բոստոնի «Հայրենիքի» խմբագրության՝ Սասունին նվիրված «բացառիկ թուի»⁹ հրատարակությանը մասնակցելու առաջարկն ստանալուց հետո: Առաջարկն արվել էր խմբագրության կողմից 1911 թ. նոյեմբերի 17-ին, ի պատասխան որի Զավարյանը դեկտեմբերի 10-ին գրում էր. «Կան առաջարկներ, որոնց ոչ մի դաշնակցական, ինչպէս և ներքոյ ստորագրեալը - չի կարող չմասնակցել: Կ'աշխատեմ ծննդեան տօներից չուշացնել»¹⁰:

1912 թ. մարտի 9-ի նամակում Զավարյանը խոստանում է Սասունի մասին հոդվածն ուղարկել 10-15 օրվա ընթացքում և նշված ժամկետից ուշացնում է ընդամենը 10 օր: Նա Սասունի բնությանն ու կյանքին վերաբերող լուսանկարները՝ ապակիներով, ուղարկում է «Հայրենիքի» խմբագրությանը 1912 թ. ապրիլի 4-ին՝ բրիտանական, իսկ հոդվածը՝ իր արդեն գրված ուսումնասիրությունից, ապրիլի 19-ին՝ ավստրիական փոստով: 1912 թ. մարտի 9-ին Զավարյանը գրում էր Վրացյանին, որ եթե Սասուն Տարոնի առաջին պրակը «յաջողութիւն գտնէ, կարելի է տպագել Կիլիկիան (որից մոտ 50-80 պատկեր կլիջէներ) ...Կը յուսամ, դրանք չեն անցեր դժբախտ «Տիտանիկ»-ին և արդէն ձեր ձեռքն են»¹¹: Եվ, իրոք, «Հայրենիքի» այդ բացառիկ համարի հասույթը՝ 500 դոլար, հատկացվում է Սասունի

6 «Միմոն Զուարեան», հատ. Բ., էջ 293:

7 Նույն տեղում:

8 Նույն տեղում, էջ 296:

9 «Միմոն Զուարեան», հատ. Ա., էջ 82:

10 «Միմոն Զուարեան», հատ. Բ., էջ 431:

11 Նույն տեղում, էջ 434:

կարիքներին¹²: 1912 թ. օգոստոսի 22-ին արդեն Զավարյանի ձեռքին էր «Հայրենիքը»՝ Սասունին նվիրված բացառիկ համարը: Նա տխրել էր՝ տեսնելով, որ իր հողվածը տպագրվել է կրճատումներով: Նույն օրը հետաքրքրվում է, թե միջոցներ ունի արդյոք «Հայրենիքը» վճարելու և տպագրելու իր նյութերը¹³:

Ու թեև Զավարյանն ուղարկում է իր ձեռքի տակ եղած նյութերն ու լուսանկարները, Բոստոնում պարզում են, որ դրանց մի մասը՝ 100-ի մոտ կեսը անհաջող է, և նորերով լրացնելու կարիք կա: Զավարյանի և Վրացյանի նամակագրությունը շարունակվել է 1913 թ. մարտ-ապրիլին: Նա տպագրությունն արագացնելու և վիճակը շտկելու նպատակով 1913 թ. մարտին գրում է Շրջաբերական, իսկ մայիսին Կովկասում առաջինն անհատապես դիմում է Հովհաննես Թումանյանին:

Իր հայրենակից բարեկամին Զավարյանն այսպես էր մեկնում այլոսը հրատարակելու իր մտադրությունը. «Մեր նպատակն է այս հրատարակության միջոցով ներկայացնել **Հայ բազմապիսի աշխատանքը, ինքնուրույն կյանքը Հայաստանի և հայի բնական շրջապատին մեջ**»¹⁴ (ընդգծումը մերն է - Ս.Ը.):

Զավարյանի հայրենագիտական գործունեությանը Թումանյանը ծանոթացել էր դեռևս 1907 թվականին Թիֆլիսում և անմիջապես եզրակացրել, որ հեղինակի աշխատանքը հենց այդ պահին կազմում էր մի «անհագին հատոր»: Մակայն արդյունքը Զավարյանին չի բավարարել, և նա շարունակել է իր գործունեությունը՝ այլոսն առավել ձոխացնելու, առավել մեծացնելու, ողջ Հայաստանի նորանոր շրջաններ ընդգրկելու նպատակով: Այդ գործով Զավարյանը զբաղվել է շարունակաբար՝ 1909 թ., երբ վարում էր Տարոնի թեմի տարրական դպրոցների տեսչի պաշտոնը և զբաղված էր ուսումնասնաթողական ձեռնարկների ու դասագրքերի ուսումնասիրությամբ: Նա ջանք չէր խնայում դպրոցների համար ձեռք բերելու կենդանիների, բույսերի, հանքային, աշխարհագրական, պատմական, գյուղատնտեսական և այլ նյութերի վերաբերյալ լուսանկարներ¹⁵:

Բանաստեղծն ամենայն հավանականությամբ ոչ միայն խորախուսել է, այլև իր աջակցությունն է առաջարկել բարեկամին: Զավարյանն էլ, հենց սկզբից վստահ լինելով ընկերոջ պատրաստակամության մեջ, խնդրել էր նրան Լոռու մասին նյութերն ու պատմական հուշարձանների, ինչպես նաև լոռեցիների կենցաղին վերաբերող լուսանկարները ուղարկել իրեն: Կ.Պոլսում տեսնելով Իզմիրյան մրցանակի համար ազգագրագետ Երվանդ Լալայանի ուղարկած Վայոց ձորի լուսանկարների հավաքածուն՝ 1913 թ. մայիսի 27-ին Զավարյանը Թումանյանից խնդրում էր կենցաղային, հնագիտական, բնության և այլ տիպի լուսանկարներ ձեռք բերել Լա-

12 Տե՛ս նույն տեղում, հատ. Ա., էջ 706:

13 Տե՛ս նույն տեղում, հատ. Բ., էջ 436: Զավարյանը հետաքրքրվում է նաև այլոսի տպագրության հարցով. նա գրում է Վրացյանին. «Ի՞նչ եղաւ արդէօք այլոսի հարցը: Եթէ յաջողուելու վրայ է, չէի հրաժարուի ձեր առաջարկութենէն՝ որևէ գումար աւանս ստանալ» (նույն տեղում): 1913 թ. մարտի 2-ին Վրացյանը Զավարյանին ուղարկում է 100 դոլարի անդորրագիր (նույն տեղում, էջ 442):

14 «Տարագ», Թիֆլիս, 1913, էջ 129: Տե՛ս նաև Թումանյան, ԵԼԺ, հատ. 7, էջ 103:

15 Տե՛ս Զավարյանի 1909 թ. հոկտեմբերի 9-ի նամակը Մարին (Միքայել Տեր-Մարտիրոսյան), «Միմոն Զաւարեան», հատ. Բ., էջ 315:

ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

Ե (ԺԵ) քառի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

լայանից, մասնագետ լուսանկարիչներից, մասնավորապես Երմակովից ու նաև լուսանկարչությանը զբաղվող դերասան Վրույրից, նկարիչ Եղիշե Թադևոսյանից, տեր Շտրիքից և ուրիշներից, ինչպես նաև չմոռանալ ուղարկել նախօրոք խնդրած Լոռվա, Շուշիների լուսանկարները¹⁶. «Գրածս այլումին աջակցելուդ մեջ համոզված էի, սիրելի՛ Օհաննես, սակայն գիտենալով քո չափազանց զբաղված լինելը, կուզենայի այդ գործը չհետաձգվեր: Լավ է դրա համար քեզ օգնական վերցնես մի ուրիշ, ավելի ազատ մարդու, թեկուզ մեր Մարիամին կամ Նուշիկին»¹⁷:

Այսպես, Զավարյանը Թումանյանին ընտրում է իբրև միջնորդ՝ իր այլընտրանքով հայկական թեմաներով գունեղ պատկերների, ազգային քանդակների, օրնամենտների և արհեստների ու արվեստների նմուշների նորաձև լուսանկարներով լրացնելու համար: Ավելին, նա հայրենակից բարեկամից խնդրում է նաև, օգտագործելով իր անառարկելի հեղինակությունը, ձեռք բերել **Մառի և Թորամանյանի** հավաքածուն. «Արդյո՞ք Մառը, Թորամանյանը հրատարակած չունին Անիի շրջակայքը գտնված իրերի արժեքավոր հնությունների նկարները»¹⁸:

Զավարյանը կասկածում էր, որ բոլորը կարող են անշահախնդիր օգնել, հետևաբար այլոնը հրատարակելու բուն նպատակը Կովկասում նա վստահում էր միայն Թումանյանին. «Ուստի, խնդրում եմ մինչև արձակուրդները ուղղակի կամ կողմնակի միջոցով չը մոռանաս դիմել, օգնություն խնդրել միայն հիշյալ անձերից՝ **առանց հայտնելու իմ ամբողջ նպատակի մասին**» (ընդգծումը մերն է – Ս.Ը)¹⁹:

Այս ամենը վկայում է, թե Զավարյանը ինչպիսի լրջությամբ ու պատասխանատվությամբ է մտնեցել իր աշխատանքին, որը կազմում էր նրա ազգային-հայրենասիրական գործունեության անբաժան մասը: Այլընտրանք լուսանկարները պետք է ցուցադրեին Հայաստանի յուրաքանչյուր շրջանի բնակչության **աշխատանքային զբաղվածության յուրահատկությունները**: Մասնավորապես՝ «**հողագործական**» **Մուշը և Շիրակը** պատկերող նկարներում արտահայտվելու էին գյուղացու աշխատանքն ու կենցաղը բոլոր մանրամասներով՝ սկսած հողը արոր-գութանով հերկելուց մինչև ցանքսը, քաղհանը, ջրելը, հնձելը, դիզելը, փոխադրելը, կալսելը, ցորեն հավաքելը, լվանալը, չորացնելն ու ջրադացում աղալը, խմոր հունցելը, հաց թխելն ու ճաշելը և այլն: Ներկայացնելով գավառների բնակչության հիմնական զբաղմունքը՝ Այլընտրանք է նաև պատկերացում ձևավորեր **մեղվաբուծական** Լոռու, **բամբակամշակ** Երևան-Ֆարխինի, **այգեգործական** Աշտարակի, **նարինջի բերքով հայտնի** Չոք-Մարզվանի, **անասնապահական** Մասունի, **շերամապահական** Վարդաշենի ու Պարտիզակի մասին՝ մեկ ամ մեկ ցուցադրելով թթի տերև կտրելը, բոժոժ հյուսելը, մետաքսե կերպաս գործելը և այլն: Զավարյանը փորձում էր ձեռք բերել այնպիսի լուսանկարներ, որոնցում պատկերված լինեին տվյալ «**վայրի կարևորագույն աշխատանքի աստիճանները, ձևերը**»²⁰:

16 Տե՛ս ԳԱԹ, ԹՖ, N 1173 (978):

17 Նույն տեղում:

18 Նույն տեղում:

19 Նույն տեղում:

20 **Թումանյան**, ԵԼԺ, հտ. 7, էջ 103-104:

Ինչ վերաբերում է քաղաքներին, ապա նա մտադիր էր դրանք ներկայացնել «իբրև արհեստների վայրեր»²¹: Միաժամանակ հեղինակը նախատեսում էր իր ազգագրական ժողովածուն հարստացնել ու գեղեցկացնել Հայաստանի բոլոր վայրերի գեղեցիկ բնապատկերներով: Խնդրելով Թումանյանին ձեռք բերել այդպիսի լուսանկարներ՝ Ջավարյանը բարեկամին տալիս է 5 կետից կազմված հանձնարարական.

«1) Գյուղի, քաղաքի մի-մի անկյուն կամ փողոց-քնորոշ տներով՝ առջևը, և ընդհանուր տեսարաններով՝ ետևում:

2) Սովորական մի ընտանիքի համախմբում տեղական տարագով, մի մասը՝ կանգնած, մյուսը՝ նստած, պառկած:

3) Տեղի ազգային-պատմական նշանակություն ունեցող շենքեր, ավերակներ:

4) Հայ գեղարվեստին վերաբերվող արտադրություններ, քանդակներ, արձաններ, խաչքարեր, նկարներ (հարսանիք, ուխտագնացություն, բարեկենդանի տեսարաններ և այլն):

5) Երկրի ընդհանուր առանձնահատուկ բնավորության մասին գաղափար տվող մի տեսարան»²²:

Այս հանձնարարականը, որը 1913 թ. մարտին Ջավարյանի գրած ընդհանուր շրջաբերական-նամակի զգալի մասի կրկնությունն էր, հեղինակն ուղարկել էր Թիֆլիս՝ Թումանյանին նրա միջոցով դիմելու հանրությանը, ինչը և մեծ սիրով կատարել է բանաստեղծը: 1913 թ. փետրվար-մարտից Ջավարյանն արդեն վատառողջ էր, սակայն շարունակում էր այլբոմն ամբողջացնելու աշխատանքները:

Նամակի շարունակության մեջ դրսևորվել են նաև Ջավարյան-մշակութային գործչի, հայրենագետի բարձր ճաշակը, արվեստագետ-արվեստաբանի հստակ սկզբունքներն ու մոտեցումները: Նա խնդրում էր, որ Թումանյանի և իրեն օգնել կամեցողների ընտրած նկարները՝

«1) Լինեն բովանդակալից - հետաքրքիր, ճաշակավոր, բայց և բնական, առանց աչքի զարնող շինծու և արհեստական գծերի ու «պոզերի»:

2) Նկարի էությունն ու բովանդակությունը պիտի արտահայտված լինի որոշ կերպով, 3-5-10 (և ոչ ավելի) անձերի, կենդանիների միջոցով:

3) Ակնթարթային...նկարի գլխավոր բովանդակությունը տեղավորված լինելով նկարի մեջտեղը, ցանկալի է, որ հեռվում նա ունենա բնական ֆոն (աշխատանքի օժանդակ մասերը, գյուղ, լեռներ, երկինք), իսկ առաջին պլանի վրա որևէ բույս, գործիք, կենդանի էակ:

4) Նկարները կամ ապակիները լինելու են հաջող և 9 #12 սանտիմետրեն ոչ պակաս և 18 # 24 սանտիմետրեն ոչ ավելի մեծությամբ:

5) Ամեն մի նկարի հետևի կողմը նշանակված պիտի լինի նկարի վայրը, ժամանակը և ամփոփ բովանդակությունը, գործողությունը, գործիքների անունները (տեղական բարբառով, ոճով, անուններով)»²³ (ընդգծումները մեր են - Մ.Հ.):

Նամակի յուրաքանչյուր տողում զգացվում է հայրենասեր հայի, հմուտ

21 Նույն տեղում:

22 «Տարագ», Թիֆլիս, 1913, էջ 129:

23 Թումանյան, ԵԼԺ, հատ. 7, էջ 105:

հայրենագետի, ազգային անխնջ գործչի սերը հայրենի բնաշխարհի և այնտեղ ապրող հայ մարդու հանդեպ, նրա մտահոգությունը վերջինիս ճակատագրով ու ապագայով:

Իր ողջ գիտակցական կյանքում տառապելով հայության հոգսերով, դեգերելով արևմտահայ աշխարհի տարբեր ճանապարհներին՝ Զավարյանը հավաքում էր հետաքրքիր մասունքներ և արդեն Կ.Պոլիս հասած՝ ուղիներ էր որոնում դրանց հրապարակման համար: Հայն ու հայրենիքը հավաստող յուրաքանչյուր առարկա Զավարյանի համար դառնում էր սրբություն: Նրա այդ հավաքածուում էր Ջեյթունի Զիհան գետից վերցված մի շիշ ջուր, «Մերսինի թե Թարուսի» հայ բանտարկյալների պատրաստած փայտե գդալները, որ վերցրել էր անձամբ՝ նրանց այցելելով բանտ, հայկական որևէ լեռան մի քար «և մի քանի ուրիշ մանր-մունր բաներ՝ բոլորն էլ Կիլիկյան յիշատակներ»²⁴: Ձեռք բերելով այս ամենը և դրանք Միմոն Վրացյանի միջոցով ուղարկելով Ժնև՝ «Իրոշակի» թանգարանին, նա փորձում էր ընդգծել հայրենագիտական և հայոց պատմության թանգարանների ստեղծման կարևորությունը: Վրացյանը, անձամբ ծանոթ լինելով այդ վիթխարածավալ նյութին, կուսակից ընկերոջ մասին «Կենսագրական նիւթերում» գրում է. «Զուարեանի մէջ, ամբողջ կեանքի ընթացքում, յեղափոխականն ու գիտնականը կռիւ էին մղում միմեանց դէմ: Զգացմունքը նրան մղում էր դէպի ընկերային գործնական պայքար, միտքը՝ դէպի գիտութիւն... Լինի Կիլիկիա, լինի Մուշ – Սասունի գիւղերում, Պոլիս թէ Կովկաս՝ նա խնամքով հաւաքում էր նիւթեր, կազմում հարցացուցակներ...գրում, նկարում...Անգնահատելի նիւթ էր հաւաքուած նրա մօտ: Վերջ ի վերջոյ յեղափոխական Զուարեանը յաղթեց գիտնական Զուարեանին»²⁵:

Թերևս որոշ վերապահությամբ պետք է մոտենալ այս կտրուկ հայտարարությանը, քանի որ ոչ գիտնական, ոչ էլ առավել ևս հայրենագետ Զավարյանը երբեք չի հաղթվել և անխնջ շարունակել է իր գիտական աշխատանքները մինչև կյանքի վերջին օրերը:

Ըստ ամենայնի, հեղինակն իր մահից առաջ գրեթե ավարտին է հասցրել «Հայր և Հայաստանը» կամ «Հայի Աշխատանքը» խորագրով²⁶ վիթխարածավալ աշխատությունը, քանի որ խնդրել է Վրացյանին «մի հարուստ քեռի»՝ հովանավոր, գտնել այլում-ուսումնասիրությունը հրատարակելու համար: Զավարյանն առաջարկում էր այլումը հրատարակել Լայպցիգում, Վենետիկում կամ Ժնևում՝ 10000 տպաքանակով, իսկ տեքստը՝ Ամերիկայի համար՝ հայերեն – անգլերեն և Եվրոպայի ու Ռուսաստանի համար՝ հայերեն–ֆրանսերեն–ռուսերեն²⁷: 1913 թ. հունիսի 4-ին Վրացյանին ուղղված նամակում նա գրում է. «Եթէ «Հայրենիքը» միջոցներ չունենայ ուզածս լրիւ այլումը հրատարակելու, որ բաւականին փարա կը պահանջէ, կ'ուզենայի այդ բանը կատարել ես ինքս: Իսկ վերջինիս համար, անշուշտ, դրամ, հրատարակիչ է փնտռուելու...: Ուրեմն, աշխատիք

24 Տե՛ս Միմոն Վրացեան, Հ.Յ.Իաշնակցութեան ծնունդը և հիմնադիրները, «Յուշապատում Հ.Յ.Իաշնակցութեան», էջ 96-103: Տե՛ս նաև՝ «Միմոն Զուարեան», Ա. հատոր, էջ 72:

25 Նույն տեղում, էջ 75:

26 Տե՛ս նույն տեղում, հատ. Բ., էջ 443:

27 Տե՛ս նույն տեղում, հատ. Բ., էջ 447:

շուտ պատասխանել...»²⁸:

Վրացյանը ոչ միայն չի մերժում կուսակցական ընկերոջը, այլև գտնում է հրատարակիչ – բարերարին և խնդրում է Ջավարյանին արագացնել ու ավարտին հասցնել գործը, գրել մի ընդարձակ առաջաբան–ուսումնասիրություն՝ «տեղագրական– ազգագրական և այլ տեղեկություններով»²⁹: Ջավարյանն, իհարկե, համաձայն էր, սակայն կարծում էր, որ լուրջ ուսումնասիրությունը կդանդաղեցնի գործը, քանի որ «այդ յառաջաբանը կը դառնայ գիրք, լուրջ հետազոտություն, նման Լինչի աշխատանքին»³⁰, հետևաբար կբարդացնի ու կդանդաղեցնի ալբոմի հրատարակությունը, իսկ նա շտապում և փափագում էր օր առաջ հրատարակված տեսնել իր երկար տարիների տքնաջան աշխատանքը՝ ասես զգալով մոտալուտ վախճանը: Բացի այդ՝ լուսանկարները գիտական լուրջ հետազոտությամբ ծանրաբեռնելը նպատակահարմար չէր գտնում նաև այլ պատճառով. կարծում էր, որ դրանով կոժվարանա պատկերների ընկալման մատչելիության ապահովումը³¹: Սակայն հայրենագետ գործչի անսպասելի վախճանը անկատար թողեց նրա երկար տարիների տքնաջան աշխատանքն ու երագանքը³²:

2. Ջավարյանի մահը և նրա հիշատակի հավերժացման փորձերը

1913 թ. հոկտեմբերի 14–ին՝ 16 անց 30 րոպեին Կ.Պոլսում՝ «Ազատամարտի» խմբագրատան ճանապարհին, սրտի կաթվածից վախճանվում է Միմոն Ջավարյանը: Նրա անսպասելի մահը ցնցեց ողջ հայությանը: Բերայի Ս.Երրորդություն եկեղեցում տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ թուրքական բարձրաստիճան պաշտոնյաների, Ռուսաստանի և Պարսկաստանի դիվանագիտական ներկայացուցիչների, պատվո պահակ կանգնելու նպատակով կառավարության կողմից ուղարկված վաշտի ներկայությամբ, զինվորական նվազախմբի մահերգի, Կոմիտասի և Ա. Շահմուրադյանի՝ «Ի վերին Երուսաղեմ», «Խավարյալ գիշեր» ողբերգերի, Եկնայանի «Հայր մեր» երգի ազդեցիկ հնչյունների ներքո:

Ասես մի վերին խորհրդով Թումանյանն այդ պահին ընկերոջ կողքին էր և իր «Հին օրհնությամբ» ուղեկցում էր բարեկամի աճյունը նույնիսկ Կ.Պոլսում: Որովհետև **Գարեգին Խաժակն**³³ իր արտասանած դամբա-

28 Նույն տեղում, էջ 443:

29 Նույն տեղում:

30 Տե՛ս Ջավարյանի 1913 թ. մարտի 29–ի նամակը Վրացյանին: «Միմոն Ջավարյան», հատ. Բ., էջ 443:

31 Տե՛ս նույն տեղում:

32 1914 թ. Ամերիկայից մեկնելիս Վրացյանը ալբոմի նյութերը՝ «թանկագին գանձը», թողել էր «Հայրենիքի» խմբագրատանը, վերադարձին օգտագործելու համար, սակայն, նրա հավաստմամբ, հետագայում պահպանվել էին Ջավարյանի մեծ գործի «փշրանքները» միայն՝ մի մասը Ամերիկայում, մյուս մասը՝ Ժնևում: 1930 թ. Վրացյանը, վերադառնալով Ամերիկա, կրկին փորձում է ի մի բերել Ջավարյանի ալբոմ–ուսումնասիրությունը, սակայն գտնում է միայն լուսանկարներով արկղը «Հայրենիքի» խմբագրության վերնատանը «փոշիների մեջ...ապակիները կոտրտված»։ Տե՛ս «Միմոն Ջավարյան», հատ. Ա., էջ 706, տե՛ս նաև՝ Ս.Վրացեան, «Կեսանքի ուղիներով», հատ. Բ., էջ 198–201:

33 Խաժակյան (Չագալյան) Գարեգին Կարապետի, դաշնակցական գործիչ– 06.08.1867,

նականի հիմքում դրեց պոետի հենց այդ քերթվածի գաղափարը: Դիմելով հանրությանը՝ նա նշեց. «Ապրեցէք, ընկերներ, բայց մեզի պէս չապրիք... Մերն ալ կեանք էր... հալածական, թափառական, մերթ անօթի... մերթ հիվանդ ու տառապող... ազգի դարաւոր անիծեալ ճակատագիրը – այդ կայենական ճակատագիրը շալակած... Չափազանց լեղի էր մեր կեանքը, մեր 90-ական թուականներու սերունդի կեանքը»³⁴: Խաժակի ելույթից Թումանյանի քերթվածի տողերը արձանագրվեցին այդ օրվա մասին պարբերականների բոլոր հաղորդումներում: Մեայուհ Ստեփանյանի խոսքերով Խաժակը «Ապրեցէք, տղերք, բայց մեզի պէս մի ապրիքով» կը գոռացնէր Ս. Երրորդություն տաճարին կամարները»³⁵:

Նույնը հանդիպում ենք «Հորիզոնի» Ա. Խ. (ըստ ամենայնի՝ Խումարյան Ալեքսանդր (Աշոտ) Հարությունի) ստորագրությամբ հաղորդման մեջ³⁶: Ս. Երրորդություն եկեղեցուց Ջավարյանի աձյունը տեղափոխվում է Բանկայթի եկեղեցի, ուր մնում է մի քանի օր: Դրանից հետո Ղալաթիո քարափից մակույկով հասցվում է ռուսական «Արքայադուստր Եվգենյա» շոգենավին, որով Միամանթոյի և բժիշկ Տեր-Ստեփանյանի ուղեկցությամբ տեղափոխվում է նախ՝ Բաթում, ապա գնացքով՝ Թիֆլիս: Ջավարյանին Թիֆլիսում հուղարկավորելը ընտանիքի և մի շարք կուսակից ընկերների խնդրանքն էր³⁷: Մինչև Բաթում հասնելը Կիրասոնի, Սամսոնի և Տրապիզոնի երեք նավահանգիստներում շոգենավը կանգ է առնում, և հավաքված մեծ բազմության պահանջով հոգեհանգիստ է կատարվում: Նավապետը նախ՝ փորձում էր ընդդիմանալ, ապա ընդառաջում է բազմության թախանձանքին: Բաթումում շոգենավին դիմավորում և աձյունը Բաթումի Ս. Փրկիչ հայկական եկեղեցի է տեղափոխում նախօրոք Թիֆլիսից եկած պատգամավորությունը: Եկեղեցու ավագերեց քահանա հայր Մ. Մելյանը հոգեհանգստյան արարողությունը կատարելիս չի ենթարկվում իշխանությունների՝ ելույթներն արգելող հրահանգին և դամբանական է կարդում: Նույնը վերաբերում է Ջավարյանի կուսակիցներին ու բարեկամներին: Եվ ոչ միայն նա. հրաժեշտի խոսքով հանդես են գալիս Հովսեփ Արղությանը, Արշ. Ղազարյանը, բանվոր Խ. Տեր-Հովհաննիսյանը, Գր. Վարդանյանը և Վ. Տեր-Աբրահամյանը: Այնուհետև վերջիններիս, ինչպես նաև Գ. Գարդիշյանի, Քրիստափոր Դանիելյանի, Գր. Գրիգորյանի և այլոց ուղեկցությամբ նոյեմբերի 2-ին՝ շաբաթ օրը առավոտյան 8 անց 40 ռուպլեին, աձյունը հասցվում է Թիֆլիսի կայարան, իսկ երեկոյան ժամը

Ալեքսանդրասյու, այժմ Գյումրի – սպանվ. հուլիս 1915: Գ. Խաժակը Թումանյանի հետ համագործակցում էր թե՛ ազգային-քաղաքական, թե՛ կրթական-մշակութային հարցերում, մասնավորապես երբ Խաժակը «Օգտակար գիտելիքներ տարածող ընկերության» կամ «Ժողովրդական համալսարանի» հայկական բաժանմունքի (սեկցիա) անդամ էր շուշեցի Լևոն Բաբայանի (1868–1920), Արտաշես Աբեղյանի (1878–1955) և բանվորական աշխարհից 11 ներկայացուցիչների հետ: Նրանք երկուսն էլ «Դաշնակցության գործով» հալածվողների շարքերում էին:

34 Տե՛ս «Միմոն Ջուարեան», Ա. հատ., էջ 60:

35 Նույն տեղում, էջ 71, տե՛ս նաև Մեայուհ Ստեփանեան, Միմոն Ջուարեան, «Յուսաբեր» օրաթերթ, Գահիրե, 1940–1941, N 219:

36 Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1913, հոկտեմբերի 30, N 245: Տե՛ս նաև՝ «Միմոն Ջուարեան», հատ Ա., էջ 318:

37 Տե՛ս 1913 թ. հոկտեմբերի 19-ին գրված «Նամակներ Պոլսէն», «Հայրենիք» երկօրյա թերթ, Պոսթըն, 1913, նոյեմբերի 15, տե՛ս նաև՝ «Միմոն Ջուարեան», հատ Ա., էջ 425:

4-ին տեղափոխվում Վանքի ավագ եկեղեցի: Թիֆլիսում թաղման թափորի մեջ էր նաև Թումանյանը: Թափորը չանցավ Միքայելյան պողոտայով, ինչպես նախօրոք հայտարարված էր: Վերջին պահին ոստիկանությունն արգելեց, և վերջինիս կարգադրությամբ թափորն անցավ Նիկոլանյան կամրջով և լուռ ու կիսախավար փողոցներով հասավ Վանքի եկեղեցի, որի տխուր զանգերը խորհրդավոր դարձրին տեսարանը: Միքայել Վարանդյանը «Միմոն Զուարեան. գծեր իր կեանքէն» աշխատության մեջ գրում է. «Երբ մեռելակառքը, դանդաղ ու հանդիսաւոր, կ'անցնէր իրիկ-նաղիմին Թիֆլիսի փողոցներով, ժողովրդի խորունկ ու պատկերաւոր լռութեան մէջ, առանց երաժշտութեան, առանց քահանայի ու դպիրներու, ուղեկցուած միայն ընկերներու և հայ չարքաշ աշխատաւորներու երկայնաձիգ ու սգաւոր շարքերէն, տեսարանը իր խորհրդաւորութեան մէջ աւելի պերճախօս էր, աւելի վեհ ու սասանեցուցիչ, քան շուպէնեան մահերգը և բերհովէնեան աստուածային սիմֆոնիները»³⁸: «Ազատամարտին» ուղղված Միամանթոյի և Հ. Տեր-Ստեփանյանի նոյեմբերի 4-ի հեռագիրը հավաստում էր, որ Զավարյանի հուղարկավորությունը տեղի ունեցավ նոյեմբերի 3-ին՝ կիրակի օրը, մեծավայելուչ շուքով, մեծաթիվ պատգամավորների և 10-12000 հուղարկավորների ներկայությամբ:

Վանքի ավագ եկեղեցում Թումանյանի մտերիմներից Մեսրոպ եպիսկոպոսը մատուցեց հանդիսավոր պատարագ³⁹՝ «դասելով Միմոնին սուրբերու դասը»⁴⁰: Բանաստեղծն այն հուղարկավորների մեջ էր, որոնք Վանքի փողոցից մտան Մուխրանյան փողոց, այնտեղից Ցիցիանովսկի վերելքով հասան Հավլաբարի հրապարակ, որտեղ նույնպես կատարվեց հոգեհանգիստ, որից հետո Խոջիվանքի փողոցով հասան գերեզմանատուն, որտեղ թեև ոչ մի ելույթ չհնչեց, քանի որ ոստիկանությունն արգելել էր ձառերն ու դամբանականները, սակայն «Հայր մերը» երգելով բազմությունը ծնկի եկավ⁴¹: Հուղարկավորությանն ականատես-մասնակիցներից Հ. Տեր-Ստեփանյանը գրում է. «Կեանքիս մէջ շատ հոգեհանգիստներ եմ տեսել և շատ «Հայր մեր»-եր լսել, բայց ո՛չ մէկը նման էր այս մէկին: Սա աղօթք լինելուց աւելի բողոք էր ցարական վարչաձևի դէմ, որ յեղափոխական մեռելին անգամ ներել չգիտէր»⁴²:

Թումանյանի հայրենակիցներից ոմանք իրենց վիշտը կիսում էին նրա հետ և Զավարյանի մահվան կապակցությամբ իրենց ցավակցությունը պոետին էին հայտնում: Արշակ Պասյանը Ալավերդիից հոկտեմբերի 25-ին գրում էր. «Միրելի Յովհաննես, Լավ զավակներ շատ է ունեցել մեր

38 Միքայել Վարանդեան, Միմոն Զուարեան. գծեր իր կեանքէն, «Միմոն Զուարեան», հտ. Ա., էջ 61:

39 Տես նույն տեղում, էջ 279:

40 Նույն տեղում, էջ 487: Տես նաև՝ «Յառաջ», Կարին, 1913, նոյեմբերի 16:

41 Տես «Միմոն Զուարեան», հտ. Ա., էջ 391: Ներսիսյան դպրոցի քառաձայն երգչախմբի կատարմամբ հնչում է «Հայր Մերը», որի ազդեցության մասին «Հորիզոնի» նոյեմբերի 5-ի հաղորդման մեջ ասվում էր. «Այդ «Հայր Մերը» բացեց մի սրտձմիկ և միանգամայն վեհ տեսարան. մի ակնթարթում յուղարկաւորները ծունկ չոքեցին և այդպէս խոնարհուած... լսեցին հանգուցեալ Եկմալեանի այնքան քաղցր, այնքան հրապուրիչ մեղեդին»: 10 անց 30-ին սկսված թաղման արարողություններն ավարտվեցին ժամը 3 անց 30-ին: Տես «Հորիզոն», Թիֆլիս, 1913, 5 նոյեմբերի: Տես նաև՝ «Միմոն Զուարեան», հատ. Ա., էջ 367:

42 Դոկտ. Յ. (Տէր) Ստեփանեան, Միմոն Զուարեանի դազադին հետ, «Յուսաբեր», 1950, նոյեմբեր, էջ 21-22, տես նաև՝ «Միմոն Զուարեան», հատ. Բ., էջ 594:

Լոռին, եկեղեցուն, գիտությանը, ազգին ու հասարակությանը մեծ մարդիկ է տվել մեր փոքրիկ անկյունը, բայց Զավարյանց Միմեոնը իր տեսակի մեջ միակն է, նա մեր եզակի զավակն է: Թողած տուն ու տեղ, արհամարհելով աշխարհիս փառքն ու վայելչությունը, նա որպես մի մարգարե, ցույցը ձեռին, քարեքար, չոլեչոլ ընկած, ամայի անապատում քարոզում էր մեծ ուսուցչի պատվերը. «Միրեսցե զը ընկեր քո, իբրև զանձն քո»»⁴³ (ընդգծումը մերն է – Ս.Հ.)⁴⁴:

Սակայն, ինչպես սովորաբար լինում է անառարկելի հեղինակությունների վախճանի դեպքում, ոմանք փորձում էին քաղաքական փարիսեցիությամբ միավորներ վաստակել ժողովրդի աչքում՝ կեղծ մեծարելով իրական մեծությանը և թաքնվելով նրա ետևում: Այսպես՝ «Մշակի» խմբագիր Հ.Առաքելյանը գրում էր. «Նա մէկն եղաւ այն սակաւաթիւ հակառակորդներից, որոնք կարողացան մնալ միշտ գաղափարական, իդէալական հողի վրայ, որոնք կարողացան յարգել իրանց հակառակորդների համոզմունքները, կարծիքները...որոնք կռուելով հանդերձ ինձ դէմ, պահպանեցին միևնոյն ժամանակ իրանց անձնական, նախկին ընկերական և բարեկամական յարաբերութիւնները»⁴⁵: Թումանյանի համար կեղծ էր «Մշակի» բարձրացրած «աղմուկը», ինչը չէր կարող չզայրացնել նրան, մանավանդ որ Հ. Առաքելյանը հավասարության նշան էր դնում Զավարյանի ու նույն օրերին վախճանված Ալ. Քալանթարի միջև: Նկատի ունենալով Քալանթարին տրված «սարերի արծիվ», «դարավոր կաղնի», հսկա, վիթխարի, տիտան բնորոշումներով զարդարված Համբ.Առաքելյանի, բժիշկ Արտաշես Շխյանի, Վ.Հայկազնի հողվածները⁴⁶, բանաստեղծը կարծում էր, որ դրանով նրա հեղինակները թաղում են ճշմարտություն, արդարություն, ամոթ ու խիղճ, քանի որ նույնիսկ ընդունակությունների առումով Քալանթարին դիտում էր իբրև «անվիճելի տափակություն», ում նա որևէ եզրով չէր կարող համեմատել Զավարյանի հետ: Նա չէր կամենում, որ այդպիսի կեղծ ու բարձրագույն բնորոշումները ստվեր ձգեին ճշմարիտ անհատի գործունեության վրա և արժեզրկեին նրան տրված ճշմարիտ գնահատանքը:

Ցուրակ Խանգաղյանին ուղղված 1913 թ. հոկտեմբերի 29-ի նամակում, երբ արդեն գրել էր Զավարյանին բնորոշող իր «Ազնիվ ու անկեղծ» հոդվածը, Թումանյանը նշում էր. «Մա ազգ չի, ժողովուրդ չի – խալիս է, խաժամուժ, խուժան, որ իր լավ թե վատ ցույցերով երբեք լուրջ գնահատող չի և միայն կարող է շփոթել ու շլկլացնել: Դրա համար գին չունի իմ աչքում և էն վայնասունը, որ բարձրացրել են Միմեոնի դագաղի շուրջը: Մի մարդ, որ Նիցցեի խոսքով ասենք, սրանց համար է եղել, բայց սրանց ընկերը չի եղել, այլ սրանցից բարձր – իր ազնվությամբ ու անկեղծությամբ և միշտ համարվել է նույնիսկ մոտիկ շրջաններում «անախորժ» մարդ: Ավելին կիմանայիք, եթե ես խոսեի նրա նամակներից, որ գրում էր մինչև

43 Թումանյան, ԵԼԺ, հտ. 7, էջ 105:

44 Նամակը ամբողջովին հրապարակվում է սույն ուսումնասիրության վերջում: Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԹՖ, N 1935 (նախկին համարը՝ 966):

45 «Մշակ», Թիֆլիս, 1913, 18 հոկտեմբերի: Տե՛ս նաև «Միմեոն Զառաբեան», հտ., Ա., էջ 597-598:

46 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, N 234, 22 հոկտեմբերի և նրան հաջորդող այլ համարներ:

վերջին օրերը»⁴⁷: Այս խոսքերը նույնպես վկայում են, որ Զավարյանը 1913 թ. մայիսից հետո էլ շարունակել է գրել պոետին ու նրա հետ անկեղծորեն կիսել է իր բոլոր մտահոգությունները, որոնք Թումանյանը գաղտնի էր պահում:

Զավարյանի հիշատակը հավերժացնելու նպատակով տարբեր առաջարկներ են արվում: Դրանցից էր մահից անմիջապես հետո, հանգանակության շնորհիվ ստեղծված «Զավարյան գյուղատնտեսական վարժարանի ֆոնդի» միջոցներով Մուշ-Սասունի մեջ վարժարան բացելու առաջարկը⁴⁸:

Հոկտեմբերի 15-ին նկարիչ **Փանոս Թերլեմեզյանն** առաջարկում է հիմնել ֆոնդ Տարնում՝ Զավարյանի անունով, գյուղատնտեսական միջնակարգ դպրոց բացելու նպատակով և հայտնում է այդ նպատակին մի նկար նվիրելու իր պատրաստականությունը⁴⁹: Պոլսում և Տրապիզոնում նույնպես որոշում են հիմնել գյուղատնտեսական դպրոցներ: Պոլսում ստեղծվում է Զավարյանի անունով «Դպրոցական ֆոնդ», որը ձուլվում է «Օգնենք Սասունին» կազմակերպությանը: Կարինում հրատարակվող «Յառաջ» լրագիրը արձանագրում էր, որ արդեն ամեն տեղ հիմնվել են «Զավարյան ֆոնդեր» և ամենուր նվիրաբերությունները պատրաստվում են ուղղել որևէ նպատակի: Թերթի խմբագրականում կարդում ենք. «Թող հիմնուի այդ դպրոցը: Զուարեան գիւղատնտեսական վարժարանը: Թող հոն կրթուին հայ պատանիներ, թող հոն պատրաստուին գիւղացիութեան նուիրուած անհատներ... Ահա լաւագոյն յաւերժացումը իրեն յիշատակին»⁵⁰:

Այս առիթով «Մշակում» հանդես է գալիս Գր. Զալխուշյանը⁵¹ «Արի սիրեն, գնա՛ մեռիր» հոդվածով, որտեղ կոչ է անում ոչ թե «քաղաքական փարիսեցիություն» դրսևորել և ձոխ թաղումներ անել, այլ տաղանդներին աջակցել կենդանության օրոք: Նա առաջարկում է մի շաբաթում հուղարկավորած երեք տաղանդների՝ Կ.Խատիսյանի, Ալ. Բալանթարի և Ս. Զավարյանի հիշատակի հավերժացման նպատակով ստեղծված երեք նոր ֆոնդերը ձուլել տպագրության ազգային տոնի առիթով ձևավորված համազգային նշանակության դպրոցական ֆոնդին⁵²:

«Հին, բայց և այնպես նոր առաջարկ» հոդվածի Գր. Բ. ստորագրությամբ⁵³ հեղինակը «Հորիզոնի» էջերում կոչ էր անում Զավարյանի հիշատակը հավերժացնել նրա տնտեսագիտական և վիճակագրական բնույթի անկատար մնացած աշխատանքները շարունակելով. «Ու այն մարդիկ, որոնց համար արժէք ու նշանակութիւն ունի աշխատաւոր մասի այդ հոծ զանգուածն ու Սիմէոն Զուարեանի յիշատակը յաւերժացնելու խնդիրը, թող իրենց լուրմաներով հրապարակ իջնեն՝ գործ դարձնելու

47 Թումանյան, ԵԼԺ, հատ. 10, էջ 191:

48 Տեն «Միմոն Զուարեան», հատ. Ա., էջ 425:

49 Տեն նույն տեղում, հատ. Ա., էջ 229:

50 «Միմոն Զուարեան», Ա. հատ., էջ 470:

51 Զալխուշյան Գրիգոր Խաչերեանի, լրագրող, հասարակական գործիչ - 01.07.1861, Նոր Նախիջևան - 12.1939 Դոնի Ռոստով:

52 «Մշակ», Թիֆլիս, 1913, 14 նոյեմբերի: Տեն նաև «Միմոն Զուարեան», Ա. հատ., էջ 615:

53 Ըստ ամենայնի՝ նրա հեղինակը Թումանյանի ընկեր, բանաստեղծ Գրիգոր Բալասանյանն էր: Բալասանյան Գրիգոր Պողոսի, բանասեր, մանկավարժ-06.12.1869, գ. Շուլավեր, - 02.1935, Տաշքենդ:

Զաւարեանի այդ ցանկութիւնը, որը նա իր միակ ուժերով անկարող եղաւ շարունակել ու իրականացնել»⁵⁴:

Ժնկի հայ ուսանողները հանգանակություն են կազմակերպում, որպէսզի ապահովեն Զավարյանի որդու՝ **Վիգենի** կրթությունը և դրանով իսկ աջակցեն նրա ընտանիքին: Սակայն, ինչպէս արձանագրում էր Ա. Վռամյանը՝ «**Հայարտ Զաւարեանի հայարտ մայրը**» (ընդգծումը մերն է – Ս.Ը.) հրաժարվում է այդ օգնությունից: Մայրը առաջարկում է որդու հիշատակը հարգել՝ նրա իդեալները կյանքի կոչելով: Իր կողմից էլ 100 ռուբլի գումար է հատկացնում որդու ծննդավայրում՝ Այգեհատում, «մի մնայուն կոթող» կառուցելու՝ գյուղատնտեսական տարրական դպրոց բացելու նպատակին: Եվ, իրոք, ոչ միայն հայ, այլև առհասարակ մարդկային հասարակության պատմության մեջ դժվար է հանդիպել վշտահար մայրերի այսպիսի վարքագծի: Դրանք սովորաբար նկարագրվում են գեղարվեստական գործերում՝ դաստիարակելու համար մարդկանց անձնագոհության գաղափարով, և ոչ միշտ են հնչում բնական ու գեղարվեստորեն պատճառաբանված, քանի որ եզակի են ու բացառիկ: «Հորիզոնին» ուղղված Զավարյանի մոր նամակում, որը գրվել էր որդու անժամանակ վախճանից ընդամենը 10 օր անց, ասվում է. «Իմ որդու ժառանգը...միանգամայն ապահովուած է և բոլորովին ազատ հայ ժողովրդի հաւաքական հոգատարութեան անհրաժեշտութիւնից: Հայ ժողովրդին մարտիրոսագրուած իմ զաւակիս յիշատակը յավերժացնելու համար խնդրում եմ նրա բոլոր ընկերներին հասարակական միջոցները ուղղել որևէ հանրօգուտ մի գործի և մասնավորապէս հայի կուլտուրական ազատագրման խնդրին, որի անձնագոհ ծառայութեան համար Միմէնս դեռ մանկութեան հասակից ստացել է իր դժբախտ մօր օրհնութիւնը»⁵⁵:

Այս նամակը նկատի ունենալով՝ Ա. Վռամյանը գրում է. «Ոչինչ աւելի հրահանգիչ մեզի, և վայել Զաւարեանի մը մօրը»⁵⁶: Եվ նա 1913 թ. նոյեմբերի 7-ին առաջարկում է հիմնել **Հայաստանի ուսումնասիրության ֆոնդ**՝ հրատարակել Զավարյանի աշխատանքներն ու ձեռք բերած նյութերը և Զավարյանի հիշատակը հավերժացնել՝ Հայաստանի բազմակողմանի ուսումնասիրությունը հաստատուն հիմքերի վրա դնելով, կամ էլ գյուղատնտեսական-արհեստակցական դպրոց հիմնել Սասունում⁵⁷:

Այս ծրագիրը կարծես չորս օր առաջ արված Թումանյանի առաջարկի շարունակությունն էր: Բնական է, որ Զավարյանի անժամանակ մահվան բոթի թարմ տպավորության տակ Ամենայն Հայոց բանաստեղծը ըստ արժանվույն պետք է գնահատեր ընկերոջ հայրենագիտական գործունեությունը, հայ հասարակությանը ներկայացներ այն՝ գրելով. «Օրն է վեր հանելու և նրա հայրենագիտության պայծառ սերն ու անզուսպ եռանդը: Տասնչորս տարուց ի վեր գբաղված էր մեր երկրի մի ուսում-

54 Գր. Բ., Հին, բայց և այնպէս նոր առաջարկ, «Հորիզոն», Թիֆլիս, 1913, 5 նոյեմբերի: Տե՛ս նաև «Միմոն Զաւարեան», Ա. հատ., էջ 371:

55 Սոֆյա Զաւարեան, Զաւարեանի մօր բաղձանքը. նամակ խմբագրութեան, «Հորիզոն», Թիֆլիս, 1913, հոկտեմբերի 24: Տե՛ս նաև՝ «Միմոն Զաւարեան», Ա. հատ., էջ 307:

56 Ա. Վռամեան, Բարոյական յուշարձան մը որ յիշեցնէր Զաւարեան, «Ազատամարտ», օրաթերթ, Կ.Պոլիս, 1913, 7 նոյեմբերի: Տե՛ս նաև «Միմոն Զաւարեան», հատ. Ա., էջ 282:

57 Տե՛ս նույն տեղում:

նասիրությունով... Ալբրուհի ծրագրից կարելի է եզրակացնել գործի մեծությունն ու լրջությունը...»⁵⁸:

1913 թ. նոյեմբերի 3-ին Թումանյանը առաջինն է հանրության ուշադրությունը սևեռում Ջավարյանի անկատար թողած գործի վրա և հանուն նրա հանդեպ իրական սիրո ու խոնարհումի՝ կոչ է անում շարունակել այն և ընդհանուր ուժերով իրականացնել ազգային և մշակութային գործչի նվիրական երազանքը: Այս ծրագրին քաջատեղյակ՝ «Հայրենիք» երկօրյա լրագրի խմբագրությունը Թումանյանից 12 օր անց՝ նոյեմբերի 15-ին, մեկ նախադասությամբ անդրադառնում է Ջավարյանի սկսած գործի շարունակման անհրաժեշտությանը՝ «Միմոն Ջուարեան» առաջնորդողում գրելով. «Իր ձեռքի գործն էր հայ կեանքն ու աշխատանքը ներկայացնող ալպոմներու հոյակապ շարքը, որ դժբախտաբար, կէս ճանապարհին մնաց, ինչպէս ընկ. Ջուարեանի բոլոր խոշոր ծրագիրները, ինչպէս և ամբողջ հայ ժողովրդի ազատութիւնը: Գաղափարակից ընկերներու և յետնորդներու պարտքն է բարձր պահել և առաջ տանել այն վեհ դրօշը, որ ընկ. Ջուարեան գիտցաւ անբիծ ու անյողդող կերպով կրել, այն խորունկ հաւատքով, որ հեռու չէ ազատութեան արշալոյսը»⁵⁹:

Այս անգամ իր ազնիվ ու անկեղծ բարեկամի փոխարեն ազգագրությանն ու հայրենագիտությանը նպաստ բերելու գործով յուրաքանչյուր հայի խաղավառելու նպատակով Թումանյանն էր ցուցումներ տալիս հասարակությանը, իր հողվածով վերջինիս փոխանցում Ջավարյանի վերը շարադրված 5 կետից կազմված հանձնարարականը և դրանով իսկ ընդհանուրի ուշադրությունը սևեռում Ջավարյանի աշխատության հրապարակման անհրաժեշտության վրա՝ հանուն նրա հիշատակի ցանկանալով ավարտին հասցնել ընկերոջ գործը: Հեռավոր Ամերիկայից Թումանյանին արձագանքում էր Վրացյանը՝ դարձյալ 1913 թ. նոյեմբերի 15-ին, «Ընկեր Ջուարեանը» հողվածում արձանագրելով, որ Ջավարյանի կազմած ալբոմը «մի հսկայական գործ» էր, «որը միակը պիտի լինէր մեր մէջ, և ահա մնում է թերի ու անկատար, ինչպէս նրա ծրագիրներից շատերը»⁶⁰:

Իսկ 1925 թվականին, երբ Թումանյանը նույնպես կնքել էր իր մահկանացուն, բանաստեղծի մտահոգությունը կիսում և նրա առաջարկը վերստին բարձրաձայնում է Ս.Վրացյանը. «...Այս անգամ էլ լուսագոյնը դարձաւ լաւի թշնամին: Համեստ ծրագրով սկսուած գործը ընդարձակուեց, մեծացաւ ու...մեռաւ: Այսօր մնացել են այդ գործի փշրանքները լոկ - լուսանկարչական ապակիները՝ Ամերիկայում, Մուշ-Մասունի շրջանից նկարները՝ Ժնևում, գուցէ և Ջուարեանի նկատողութիւնները «Հայրենիքի» արխիւների մէջ: Այդ նիւթերը հնարաւոր է համախմբել և գէթ փոքրիկ սահմաններով իրագործել Ջուարեանի մտադրութիւնը-մի գործ, որ ոչ միայն կը լինէր վայելուչ յարգանք հայ աշխատանքի երկրպագու Ջուարեանի յիշատակի, այլև օգտակար ազգա-պատմա-տնտեսագրա-

58 Թումանյան, ԵԼԺ, հատ. 7, էջ 103:

59 «Միմոն Ջուարեան. կենսագրական ակնարկ», առաջնորդող, «Հայրենիք», 1913, նոյեմբերի 15: Տե՛ս նաև՝ «Միմոն Ջուարեան», Ա. հատ., էջ 423-424:

60 Միմոն Վրացեան, Ընկեր Ջուարեանը, «Հայրենիք», 15 նոյեմբերի, 1913: Տե՛ս նաև՝ «Միմոն Ջուարեան», Ա. հատոր, էջ 431:

կան մի աշխատանք: Չէր կարող արդեօք Ամերիկայի Տարօն-Տուրուբերանի Հայրենակցական Ընկերությունը իր վրայ վերցնել այդ գործը»⁶¹ (ընդգծումը մերն է - Մ.Հ.):

Սակայն Զավարյանի երազանքը այդպես էլ մնում է անկատար. Վրացյանը վկայում է. «Ամերիկայից մեկնելիս, 1914-ին, ես այդ թանկագին գանձը թողել էի «Հայրենիքի» խմբագրատունը, վերադարձիս օգտագործելու համար: 1930-ին, երբ երկրորդ անգամ գնացի Ամերիկա, այդ արկղը գտայ «Հայրենիքի» վերնատանը, փոշիների մէջ: Միմոն Զաւարեանի գուրգուրանքի առարկայ լուսանկարների բոլոր ապակիները կոտրուած էին վանդալների ձեռքով...»⁶²:

Եթե հայ հասարակությունը ականջալուր լիներ Թումանյանին ու Վրացյանին, ապա այսօր Հայ դատի պաշտպանները իրենց ձեռքին կունենային գիտական ևս մի կովան, փաստարկ՝ ժամանակին լույս ընծայված հայրենագիտական լուրջ ուսումնասիրություն - պատկերազարդ ալբոմ՝ վավերագիր կորսված հայրենիքի մասին:

3. Զավարյանի հիշատակի հավերժացումը Հովհ. Թումանյանի կողմից

Զավարյանի մահը զուգադիպեց հայ մշակութային կյանքում խոշոր մի երևույթի. հայությունը մեծ խանդավառությամբ սկսել էր տոնել գրերի գյուտի 1500-ամյա և հայ տպագրության 400-ամյա հոբելյանները: 1913 թ. հոկտեմբերի վերջին շաբաթ օրը Բեռլինի հայերը տեղի բանվորական միության նախաձեռնությամբ միաժամանակ նշում են ազգային մեծ հոբելյանը և սգահանդես կատարում Զավարյանի պատվին: Հարգելով քաղաքական գործչի հիշատակը՝ նրանք հայտագրից դուրս են թողնում նախօրոք ծրագրած գեղարվեստական - երաժշտական մասը: Գրերի ստեղծման և տպագրության 400-ամյակին նվիրված դոկտ. Ա.Հայրանյանի բանախոսությունից անմիջապես հետո սկսվում է սգահանդեսը: Ըստ այդ հաղորդման՝ Բեռլինի սգահանդեսին ուսանող Դավիթխանյանը կարդացել է Ավ. Իսահակյանի «Ողբում եմ» արձակ քերթվածը⁶³: «Ողբում եմ»-ը

61 Նույն տեղում, էջ 83:

62 Նույն տեղում, էջ 706:

63 Կարծում ենք՝ այստեղ շփոթություն կա: Հայտնի է «Միմոն Զավարյանի հիշատակին» խորագրով Իսահակյանի չափածո բանաստեղծությունը «Նա գալիս էր հին, հեռավոր դարերից» սկսվածքով, որը հեղինակը գրել է 1913 թ. նոյեմբերին ժննդում: Այն տպագրվել է «Բաքվի ձայն» օրաթերթում 1913 թ. նոյեմբերի 28-ին, այնուհետև տարիներ անց՝ 1989 թ. Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունը հրատարակվել է «Գրական թերթում» (13 հոկտեմբերի, N 42): Իսկ այդ օրերին գրված «Ողբում եմ» խորագրով միայն մի ելույթ կա, որն ավելի դանբանական է հիշեցնում, քան արձակ ստեղծագործություն: «Ողբում եմ»-ի հեղինակը գրում է. «Ուրեմն չկայ Հայաստանի Մոխակը: Նա այնս դայլայլելու չէ Մշոյ դաշտերում, Սասնոյ լեռներում...Տառապանքի աշխարհի սիրահարը այժմ էլ չկայ. Ընկել է անողորմ մահուան գերանդիով. Վերան դառնաս աշխարհ, որ անկուշտ ծոցիդ մէջ, թէ՛ լաւը և թէ՛ վատը կյանում ես»: («Զաւարեան», հատ. Ա., էջ 334): Հնարավոր է, որ մեկ էջի սահմաններում հենց այս խոսքն է արտասանել ոմն ուսանող Դավիթխանյանը, և այն պատկանում է Ավետիք Իսահակյանի գրչին, սակայն երկու հանգամանք կասկածի տեղիք են տալիս. նախ, որքան մեզ հայտնի է, Ավ.Իսահակյանը ունեցել է 1) Ա., 2) ԱԱ. 3) Ար.Ա., 4) Արմեն, 5) Արմենյան Արմեն, 6) Հայ դերասան ընկերակցություն, բայց ոչ Սեպուհ ծածկանունը: Վստահ ենք նաև, որ հեղինակը Կահիրեի «Հուսարեր»-ում տպագրվող Սե-

ունի Սեպուհ ծածկանվամբ ստորագրություն և տպագրվել է «Հորիզոնում» նոյեմբերի 2-ին՝ Զավարյանի աճյունի Թիֆլիս հասնելու օրը: Դավիթ-խանյանը կարդացել է նաև Թումանյանի՝ մինչ օրս հայ գրական շրջաներին անհայտ մի բանաստեղծություն «**Կարմիր դրոշն ազատության**» սկսվածքով, որն ըստ ամենայնի նվիրված է եղել Զավարյանին կամ հայ ազատագրական պայքարին: Դժվար է ասել, թե կոնկրետ երբ է գրվել բանաստեղծությունը և ինչպես, ու՞մ միջոցով է նրա ինքնագիրը հասել Գերմանիա՝ ուսանող Դավիթխանյանին: Սակայն ամենայն հավանականությամբ այն ստեղծվել է Զավարյանի կամ Կոստանդին Խատիսյանի մահվան անմիջական ազդեցությամբ: Բանաստեղծությունը, որը տպագրվել է «Ազատամարտի» էջերում՝ **Ընկեր** ստորագրությամբ հաղորդման մեջ, բերում ենք ամբողջությամբ:

*Կարմիր Դրոշն Ազատության
Բացուեց Հայոց սարերում,
Ցոլաց շողքը առաօտեան
Մեր աշխարհի խաւարում:*

*Բացուեց, թնդաց քաջ Ֆեդայիս
Հրացանը մահաբեր,
Հայի բողոքն փարաւ հեռու
Օրսար փեղեր ու ափեր:*

*Վեր կաց շուրով, դու թառամած
Հայոց դժբախտ ժողովուրդ.
Ու վեր կացաւ Հայը ցրած
Արևելքից Արևմուտք:*

*Վեր են կացել մի մարդու պէս,
Թե՛ն են առել հողմերից,
Արշաւում են կռուի հանդէս
Ամէն երկրից ու փեղից:*

*Խումբ է գալիս մեր Կովկասից,
Հեռու ափից Նեղոսի,
Խումբ է գալիս երկրէն Պարսից,
Պաղ ձիւներէն հիւսիսի:*

*Բանտ, կախաղան, սուր, հալածանք
Էլ չեն առնի սոցա դէմ,
Մինչև չփրան մեզ ազատ կեանք*

պուհ Ստեփանյանը չէ, քանի որ նա գրում էր արևմտահայերենով: Բացի այդ ելույթում նշվում էր. «Դեռ մի տարի առաջ էր, որ պատահեցի նորան մեր գիւղում», իսկ Բասահայանը չէր կարող 1912 թ. հանդիպել Զավարյանին Շիրակի Ղազարապատ գյուղում, քանի որ նա Կովկասից հեռացել էր 1911 թ. հունիսի 26-ին՝ խուսափելով «Դաշնակցության գործով» բանտարկությունից և քաղաքական հալածանքներից: Կարելի է ենթադրել նաև, որ «Ողբում են» խորագրով իրոք կա գեղարվեստական ստեղծագործություն՝ արձակ քերթված, որը մեզ անհայտ ճանապարհով հասել էր Բեռլին, ինչպես որ Թումանյանի բանաստեղծությունը:

Եւ աշխարհը մեր Եղև:

*Կեցցէ՛ Դրօշն Ազատութեան
Բարձր ու կանգուն, հաստատուն.
Կեցցէ՛ ծերուկ մեր Հայաստան,
Կարմիր Ջէյթօն ու Սասուն⁶⁴:*

Առհասարակ քիչ են այնպիսի գործիչները, որոնց մահը առաջ է բերում վիթխարածավալ, համազգային արձագանքներ: Սակայն ակնհայտ է նաև, որ հնչած ելույթների մեջ առանձնանում են Թումանյանի երկու հոդվածները, որտեղ գրողի հմայիչ, պատկերավոր և անկեղծ խոսքում տեղ գտան Զավարյան մարդու և գործչի հատկանիշների թումանյանական հանձարեղ վերլուծություններն ու բնութագրումները:

1913 թ. հոկտեմբերի 17-ին՝ «Հորիզոնում» Զավարյանի մահվան գույժը տպագրվելու հաջորդ օրը, լույս տեսավ Թումանյանի «Ազնիվ ու անկեղծ» հոդվածը, իսկ նոյեմբերի 3-ին՝ Զավարյանի թաղման օրը՝ «Ս. Զավարյանի բնավորության գծերից» հրատարակումը⁶⁵: Հեղինակն իր առաջին հոդվածում նախ և առաջ շեշտեց Զավարյանի մարդկային նկարագրի բացառիկ հմայքը՝ խոսքը սկսելով հոդվածի վերնագրի մեկնությունից. «Ամեն մարդու էլ հո չի կարելի անվանել ազնիվ ու անկեղծ: Ամեն մարդ էլ հո չի կարող լինել ազնիվ ու անկեղծ: Շատ հազարների մեջ մինը կարող է լինել ազնիվ և անկեղծ: Էս տեսակ հազվագյուտ մարդկանցից մինն էր Միսնոն Զավարյանը: **Նա կարող էր սխալվել, բայց դիտավորությամբ չէր խաբել երբեք, ճշմարտության հանդեպ այք փակելու սովորություն չուներ, չգիտեր գնալ բազմության հետևից, չգիտեր ձևանալ էն, ինչ որ չէր և միշտ մնաց անկեղծ, ինքնությունն ու ինքնատիպ»** (ընդգծումը մերն է՝ Ս.Ը.)⁶⁶:

Կուսակցական-ազգային գործչին Թումանյանը բնորոշում է նաև որպես «ինտելիգենտ ու կուլտուրական մարդ...բառի ամբողջ իմաստով», միաժամանակ ընդգծում էր Զավարյանի գերզգայուն ու անհանգիստ բնավորությունը՝ անվանելով նրան «զարմանալի քնքրյալ սրտի տեր: Ամեն անգթություն անտանելի էր նրա համար, ամեն անարդարություն ալեկոծում էր նրա հոգին, ինչ ասպարեզում ուզում է լիներ, և նա բնավ հանգիստ չկարողացավ ունենալ էս անգթություններով ու անարդարություններով լիքը կյանքում»⁶⁷: Թումանյանն անդրադառնում է Զավարյան-անհատի մեջ առկա «հայրենասպիրության առողջ զգացմունքին և հայրենագիտության բուռն տենչին»: Բանաստեղծը ականավոր դաշնակցական

64 Նույն տեղում, էջ 273: Անշուշտ, բանաստեղծության հեղինակը Թումանյանն է. հարդրման մեջ նշվում էր, որ ուսանող Դավիթյանյանը «հուժկու շեշտով ու մեծ ոգևորությամբ արտասանեց Յ. Թումանյանի «Կարմիր Դրօշն Ազատութեան» հետևեալ անտիպ ոտանատրը՝ նոյն տրամադրությամբ համակելով բոլոր ներկաները»: Տե՛ս «Ընկեր» ծածկանունով «Ցոբելեան և Սգահանդէս Պերլինի մէջ» հոդվածը, «Ազատամարտ», օրաթերթ, Կ.Պոլիս, 1913, 30 հոկտեմբերի: Տե՛ս նաև՝ «Միսնոն Զաւարեան», հատ. Ա., էջ 273: Կարծում ենք, որ հարդրման հեղինակը կամ պարզապես թերթի խմբագրությունում մեկ երկու բառ փոխել են. Թումանյանին խորթ է «Ֆետայու» կամ «տոցա» բառերի գործածությունը:

65 Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1913, 17 հոկտեմբերի, N 233, 3 նոյեմբերի, N 248:

66 Թումանյան, ԵԼԺ, հտ. 7, էջ 99:

67 Նույն տեղում, էջ 100:

գործչին անվանում է ազգի մեծ նվիրյալ՝ բոլոր բնագավառներում և հատկապես ընդգծում է նրա անձնագոհությունը. «**Քուրբ սրտով նվիրվեց ամեն գործի, ինչ գործի որ մտեցավ՝ գիտական, հասարակական թե ազգային, տվեց ամեն բան, ինչ որ ուներ ու կարող էր տալ և միայն մի մարդ կար, որին կյանքում անխիղճ կերպով զրկեց ամեն հարմարությունից, ամեն հաճույքից ու ամեն վայելքից - էդ էլ հենց ինքն էր**»⁶⁸ (ընդգծումը մերն է-Ս.Հ.):

Թումանյանը ինչպես սկսել էր «Ազնիվ ու անկեղծ» հոդվածը, այնպես էլ ավարտում էր՝ վերստին անդրադառնալով իր հոդվածի վերնագրի խորհրդին. «Ինչքան էլ առաքինություններ ունենա մարդը, ամենից գլխավորն էն է, որ անկեղծ լինի ու ազնիվ: Եվ Միմոնը անկեղծ էր ու ազնիվ»⁶⁹:

Իհարկե, Թումանյանը գիտեր շատ ավելին, քան ասում էր հրապարակայնորեն: Ուստի նա նշում էր, որ Զավարյանի «անկեղծությունն ու ազնվությունն էլ վերջը պատիժ դարձան իր գլխին», սակայն փակագծերը չէր բացում:

«Ս.Զավարյանի բնավորության գծերից» հոդվածում գրողն ընկերոջ բնավորության՝ արդեն իր նշած ամանձնահատկություններին ավելացնում է ևս երկուսը. «Պարզ գիտակցությունն ու կյանքի իրականության զգացումը», որոնք, ըստ հեղինակի, մարդուն դարձնում են «շատ թանկագին»: «Եվ Միմոնի մեջ կար էս երջանիկ հատկությունների ներդաշնակությունը,- գրում է Թումանյանը՝ ընդգծելով նրա սկզբունքայնությունն ու անզիջում պայքարի մարտիկ լինելը: Էս էր պատճառը, որ նա միշտ կռվում էր մեզանում: Եվ երբ նրան ասում են կռվող, ես ամենից առաջ հասկանում եմ կռվող մեր մեջ, մեր միջավայրում, ուր էնքան պակաս են կյանքի առողջ զգացումն և ազնվությունն ու անկեղծությունը: Եվ էս կռիվը էնքան տաք ու անվերջ էր, որ նրան դարձրել էր շատերի համար անախորժ մարդ» (ընդգծումը մերն է - Ս.Հ.)⁷⁰:

Թումանյանի վերը նշված երկու հոդվածներում հառնում է Զավարյանի կերպարը: Նա տալիս է ազգային գործչի ու մարդու նկարագիրը՝ ազնիվ ու անկեղծ, սկզբունքային ու մարտնչող, խելամիտ ու զգայուն... Հայտնի է, որ պոետի համար արվեստի ճշմարիտ գործը պետք է լինի աչքի պես պարզ և աչքի պես բարդ: Ժամանակակիցների ընկալմամբ հենց այդպիսի մի անհատականություն էր Ս.Զավարյանը:

Խանդավառ ու անկեղծ հայրենասիրությամբ լի ցանկացած մեկը, անկախ իր քաղաքական հայացքներից ու կողմնորոշումից, մոտ ու հարազատ էր Ամենայն հայոց բանաստեղծի հոգուն, եթե բարձր էր նրա մարդկային որակը, եթե ուներ այնպիսի եռանդ, որի կրակից միշտ լույս էր ծագելու ժողովրդի համար, իսկ թե որ կողմից լույսը կծագեր՝ այնքան էլ կարևոր չէր: Ահա թե ինչու հայրենակից բարեկամի մասին խոսքը Թումանյանն ավարտում է այսպես. «**Բարձր իմացականության և ազնիվ հոգու հետ ուներ շատ քնքուշ սիրտ: Եվ ամբողջը լիքը մի անշեջ կրակով, որ վերջ ի վերջո էրեց ու սպառեց իրեն: Հսպես է. ով ուզում**

68 Նույն տեղում., էջ 99-100:

69 Թումանյան, ԵԼԺ, հտ. 7, էջ 99-100:

70 Նույն տեղում, էջ 102:

է լույս տա-պետք է էրվի»⁷¹ (ընդգծումը մերն է – Ս.Հ.):

Թումանյանի երկու հոդվածները, իրոք որ, լավագույններից էին, եթե ոչ լավագույնը Զավարյանի մասին հրապարակումների հեղեղի մեջ, և դրանց արժանիքներից մեկն էլ այն է, որ գրվել են ազնիվ ու անկեղծ մարդու մասին՝ ազնիվ ու անկեղծ մղումներով: Դրա փայլուն վկայությունն այն է, որ հենց Ամենայն հայոց բանաստեղծի տված բնութագիրը, այն էլ՝ հատուկ ընդգծված, տեղ գտավ «Միմոն Զավարեան» եռահատորյակի «Դաշնակցութեան խիղճը» խորագրով ՀՅԴ Բյուրոյի խոսքում՝ գրված 1983 թ. հոկտեմբերին: Այնտեղ ասվում է. «**Էսպէս է, ով ուզում է լույս տա-պետք է էրուի-գրեց իր մասին Յովհաննէս Թումանեան, պարզուկ այլ որքան ճշմարիտ պատկերի մը մէջ խտացնելով Զաւարեանի և Զաւարեաններու հանապազօրեայ ինքնանուիրման բովանդակ իմաստը**»⁷² (ընդգծումը մերն է – Ս.Հ.):

Վերջաբանի փոխարեն

Երկու մեծ լոռեցիները՝ Թումանյանը և Զավարյանը, երկարակյաց տոհմերից էին, սակայն կյանքից հեռացան վաղաժամ⁷³. Զավարյանը՝ 48, Թումանյանը 54 տարեկան հասակում: Երկուսի մայրերն էլ մի զարհուրելի նախազգացումից՝ Գիքորի մոր պես արտասվում ու անհանգստանում էին, երբ իրենց անդրանիկ զավակներին Լոռուց ճանապարհում էին մեծ աշխարհ՝ կրթվելու, պայքարելու, մարտիրոսվելու ու նահատակվելու, և երկու որդեկորույս մայրերն էլ սզացին իրենց երեխաների անժամանակ մահը⁷⁴:

Հայության **երկու** տաղանդավոր զավակները հոգեկան ազգակցություն ունեին, խառնվածքի, նկարագրի ու գործունեության որոշակի ընդհանրություն: Նրանք մեծ էին իրենց մաքրությամբ, ողջակիզումով, այն աստվածային կայծով, որ ապրում էր նրանց հոգում:

Երկուսն էլ աչքի էին ընկնում հայրենի բնության նկատմամբ վիթխարի սիրով: Թումանյանի բնապաշտությունը հայտնի է ամենքին, իսկ Կիլիկիայում Զավարյանի հետ շրջագայած Խանասորի Վարդանի հավաստիացմամբ՝ «Միմոնը պաշտող, սիրահար էր հայկական բնութեան, նրա օդի, հողի, լեռների ու ջրերի...»⁷⁵:

Երկուսն էլ միշտ այնտեղ էին, ուր կար գաղտնի, ընդհատակյա կազմակերպություն, ուր կար ժողովուրդ և հայ թե՛ ռուս իշխանավոր: Նրանք ամենուր էին և մշտապես զգում էին քաղաքական կյանքի զար-

71 Նույն տեղում, էջ 105:

72 Նույն տեղում, էջ 4:

73 Թումանյանի գերդաստանից շատերն են ապրել 100 տարուց ավելի, իսկ Զավարյանը հայարտանում էր՝ «Իմ ցեղը երկարակյաց է»: Տես Վր. Թորգոմեան, Միմոն Զավարեան, «Աշխատանք», լրագիր, Զմիռնիա (Իզմիր), 17 նոյեմբերի: Տես նաև՝ «Միմոն Զավարեան», հտ.Ա., էջ 586:

74 Այդ մասին գրում է բժ. Յ. Զարեանը «Միմոն Զավարեանը» հոդվածում, «Հայրենիք», ամսագիր, 1960, հոկտեմբեր, էջ 713: Տես նաև «Միմոն Զավարեան», հատ.Ա., էջ 102: Զավրիկը նույնը գրում է նաև «Խարազանող մարգարեն» հոդվածում, տես «Դրօշակ», 1913, Ժնև, սեպտեմբեր-հոկտեմբեր, N 11-12: Տես նաև՝ «Միմոն Զավարեան», հատ. Ա., էջ 217:

75 Միմոն Վրացեան, Միմոն Զավարեան, «Յուշապատում Հ.Յ.Դաշնակցութեան», էջ 96-103: Տես նաև «Միմոն Զավարեան», հատ. Ա., էջ 72:

կերակը, անհանգստանում էին, օգնում, փորձում էին իրենց հավասարակշռված մոտեցումներով անհեռատես քաղաքական գործիչներին հեռու պահել չմտածված քայլերից:

Երկուսով էլ հավածվեցին իշխանությունների կողմից, և **երկուսն էլ** անժամանակ հեռացան կյանքից: Նրանց կյանքը հարատև և անդադրում նահատակություն էր, որը հանձն առան կամովին՝ առաքելական հավատքով:

Երկուսն էլ այրվեցին հայրենիքին ու ժողովրդին պատուհասած ողբերգությունների հրդեհում, այրվեցին այդ հրդեհները մարելու համար, այրվեցին յուրաքանչյուր հայի ճակատագրով և «մումի մը պես շիջան», սպառվեցին լույս տալով, այնպիսի պայծառ լույս, որն այսօր էլ ճշմարիտ փարոս է հայությանը դեպի ապագան ուղղորդող՝ խորհուրդող ու վտանգավոր ճանապարհներին:

Երկուսին էլ ժամանակակիցներն իրավամբ բնորոշեցին **հայ ժողովրդի խիղճը**⁷⁶: Եվ, իրոք, հայ ժողովրդի համար արհավիրքի, դաժան փորձությունների բախտորոշ տարիներին նրանք՝ իրենց ժամանակին գույն տվող հզոր անհատականությունները, **երկու մեծ լոռեցիները**, մարտիրոսացան և դարձան **հայության խիղճը**:

76 Տե՛ս մեր «Հովհաննես Թումանյանի կյանքի ու ստեղծագործության պատմությունը (1900-1912)» աշխատության մեջ հրապարակված ռուս փաստաբան, սենատոր Նիկոլայ Դմիտրևիչ Սոկոլովի հեռագրի խոսքերը Թումանյանի մասին, էջ 386, ինչպես նաև՝ «Ազատամարտի» 1913 թ. հոկտեմբերի 16-ի (29-ի) առաջնորդողը Սիմոն Զավարյանի մասին («Միմոն Զաւարեան», հատ. Ա., էջ 226): Միջայել Վարանդյանի խոսքերով՝ Զավարյանը «Դաշնակցության խիղճն էր» («Միմոն Զաւարեան», հատ. Ա., էջ 73), թեև Սիմոն Վրացյանը չափազանցված ու միակողմանի համարեց այն ընդհանուր կարծիքը, թե Զավարյանը «Հ.Յ.Դաշնակցութեան և, առհասարակ, հայ ժողովրդի խղճի մարմնացումն է» (նույն տեղում, էջ 74): 1913 թ. հոկտեմբերի 22-ին Վանում տեղի ունեցած հոգեհանգստին Վանա Իշխանը ասում է. «Զաւարեանը մեր կուսակցութեան խիղճն էր: Ինչ վատ գործ գործէինք կուսակցութեան ներսը, նա մեր դէմը կը ելլէր մեզ քննադատելու ու պախարակելու: Անհար էր, որ Զաւարեանի ստուերը մեր մտքերէն հեռանար» (նույն տեղում, էջ 569): Նույնը կարդում ենք Ֆար-Հատ-ի հոդվածում, որտեղ Զավարյանը բնորոշվում է իբրև Դաշնակցության **խիղճը**, նրա առանցքը և անկաշառ հրամանատարը (նույն տեղում, էջ 242): Նույնպիսի բնորոշում է տալիս նրան Մարգարեթ Զյուռնիայի (Իգմիր) «Աշխատանք» լրագրում. «Չկայ Քրիստափորը, Դաշնակցութեան ուղեղը, չկայ այլևս Սիմոնը: Դաշնակցութեան, աւելի՛ հայութեան **խիղճը**» (նույն տեղում, 582): Գ.Խաժակի խոսքերով՝ Զավարյանն է «Կենդանի **խիղճը** հայութեան...մեր մարմնացած **խիղճը** (ընդգծումները մերն են - Ս.Հ.)» (նույն տեղում, էջ 92,100):

ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐ

1.

Միմոն Զավարյանի նամակը⁷⁷ Հովհաննես Թումանյանին

Պոլիս-Թիֆլիս

1913 մայիսի 27

Միրելի՛ Օհաննես,

Ուրախացա Բաթումից գրածդ երկրորդիդ. «Տպավորություններին»: Այս գործնական դարի մեջ տալու չէ մեծ նշանակություն: Շատ էս հեղք նայելու և ավելի մարդկանց գործերին, արարքների **արդյունքներին**, համենայն դեպս (որոշ նվազագույն մեր **անկապրելի** իրավունքների զարգացման գործնական երաշխիքների պայմանով) ցանկալի է մերձեցում, զուցե և կադարյալ հաշտեցում՝ մեր երաշխիքների հեղք: Այսուհանդերձ մոռանալու չէ երբեք, որ մարդու բախտի **տնօրինողը** ամենից ավելի ինքը մարդն է, իր գիտակցությունը, ուժը: Ուրիշի արած բարեգործությամբ, տված ողորմածությամբ սնանկացած տնտեսությունը չի վերականգնվի: Շատերը մոռանում են այս էական **միտքը**:

Գրածս այբումին աջակցելուդ մեջ համոզված էի, սիրելի Օհաննես, սա-կայն գիտենալով քո չափազանց զբաղված լինելը, կուզենայի այդ գործը չհետրաձգվեր: Լավ է դրա համար քեզ օգնական վերցնես մի ուրիշ, ավելի ազատ մարդու, թեկուզ մեր Մարիամին կամ Նուշիկին: Չէի ուզենալ, որ պետզի ամառը մարդկանց չլինելու պատճառով ընդհատում առաջ բերեր այդ աշխատանքի մեջ: Ուստի, խնդրում եմ մինչև արձակուրդները ուղղակի կամ կողմնակի միջոցով չը մոռանաս դիմել, օգնություն խնդրել միայն հիշյալ անձերից՝ **առանց հայտնելու իմ ամբողջ նպատակի մասին**⁷⁸:

1. Երվանդ Լալայանից⁷⁹ վերցնելով իր հրատարակությունների մի քանի տիպիկ նկարներ:

2 Տեղիդ նկարիչներ Թադևոսյանին⁸⁰ և ուրիշների (լավ, հայկական գույն ունեցող պատկերների լուսանկարները), հայկ. քանդակների, օրնա-մենարների նմուշներ առնելով:

3 Վրոյրին⁸¹ ուզելով իր լավագույն և [անընթ.] սպակիներից ոմանք:

77 Նամակը հրատարակվում է առաջին անգամ: Ինքնագիրը պահվում է Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ), Թումանյանի ֆոնդում (ԹՖ), N 1173 (հին համարը՝ 978):

78 Զավարյանը կասկածում էր, որ բոլորը չեն կարող անշահախնդիր օգնել, հետևաբար այբումը հրատարակելու բուն նպատակը Կովկասում նա վստահում է միայն Թումանյանին և նամակում ընդգծում է նպատակը գաղտնի պահելու խնդրանքը:

79 Լալայան Երվանդ Ալեքսանդրի - ազգագրագետ, բանահավաք, հնագետ, «Ազգագրական հանդեսի» (1896), Ազգագրական հրատարակչական ընկերակցության (1900) և Հայոց Ազգագրական ընկերության (1906) հիմնադիր և նախագահը - 13.03.1864, Ալեքսանդրապոլ, այժմ՝ Գյումրի 24.02.1931, Երևան:

80 Թադևոսյան Եղիշե Մարտիրոսի նկարիչ, Հայ արվեստագետների միության հիմնադիրներից մեկը և նախագահը (1916), Վրաստանի Գեղարվեստի ակադեմիայի հիմնադիրներից (1923), ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ-12.09.1870, Վաղարշապատ, այժմ՝ Էջմիածին -22.01.1936, Թբիլիսի (թաղվել է Երևանում):

81 Վրոյր Արամ Միսասի (Մաքաշյան) - դերասան, թատերական գործիչ, բեմադրիչ,

4) **Լուսանկար Տէր Ղևոնդյանից⁸², Երմակովից⁸³ ջոկել հայ ժողովրդի կենցաղին, փրկելի վերաբերյալ նկարներ:**

Իզմիրյան մրցանակի, որ Լալայանը ողարկած է այստեղ Վայոց ձորի նկարների հավաքածուն (Կարծեմ Երմակովի նկարածը): Մի քանիսը սրացածից ես ջոկած և բերել կուտամ Երմակովից⁸⁴:

Արոյոք Մառը⁸⁵, Թորամանյանը⁸⁶ հրատարակած չունին Անիի շրջակայքը գտնված իրերի արժեքավոր հնությունների նկարները:

Չես մոռանալ, անշուշտ, Լոռի, Շուշավեր (1 անընթ.) ուզածս նկարները: Բարևներս ծանոթներիս
Քո Միմն

(ընդգծումները Միմնն Զավարյանինն են – Ս.Ը.):

թարգմանիչ, հնագիտական ուսումնասիրությունների հեղինակ, - 13.03.1863, Կ.Պոլիս - 05.03.1924, Թիֆլիս: Զավարյանը խնդրում է Թումանյանին դիմել նրա օգնությանը, քանի որ Վրույրը զբաղվում էր նաև լուսանկարչությամբ և 1904-1917-ին մասնակցել էր Ն.Մառի գիտարշավներին (Անի, Գառնի, Վան և այլն), և հենց նրա մասնակցությամբ են 1905 թ. հայտնաբերվել Անիի Գրիգոր Լուսավորչի տաճարի (Գազկաշեն) ավերակները: Բացի այդ 1912-ից նա Հովհ. Թումանյանի նախագահությամբ գործող «Հայ գրողների կովկասյան ընկերության» անդամ էր, իսկ 1913-ին խմբագրում և հրատարակում էր «Հուշարար» հանդեսը:

82 **Տէր - Ղևոնդյանը** հավանաբար ժամանակի լուսանկարիչներից է:

83 **Երմակովը** Ռուսաստանի լավագույն մասնագետ լուսանկարիչներից էր:

84 Երվանդ Լալայանը ավելի ուշ հրատարակեց Վայոց ձորի, Վասպուրականի և Նոր Բայազետի հուշարձաններին նվիրված 3 նկարագաղթ, ստվարածավալ ալբոմ՝ հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն բացատրություններով:

85 **Մառ Նիկողայոս Յակովլևիչ**- շոտլանդացի (մայրը՝ վրացի) անվանի լեզվաբան, արևելագետ, հայագետ, ակադեմիկոս-25.12.1864 (Քուբայիս)-20.11.1934 (Լենինգրադ, այժմ՝ Պետերբուրգ): Ժամանակակիցներին, այդ թվում Զավարյանին գաղտնիք չէր, որ Մառը դեռ 1904 թ. ամռանից սկսել էր Անիի պարբերական պեղումները, որոնց մասնակցել է նաև Թորամանյանը՝ չափագրելով Անիի եկեղեցիները, պալատները, պարիսպները, կամուրջները և այլն: Հենց այդ պատճառով էլ Զավարյանը խնդրում էր իր հայրենակից բարեկամից, օգտագործելով իր հեղինակությունը, ձեռք բերել Մառի և Թորամանյանի հավաքածուն:

86 **Թորամանյան Թորոս Հարությունի** - ձարտարապետ, հայկական ձարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր - 18.03.1864, Շապին Գարահիսար-01.03.1934, Երևան: Դեռ 1903-ին՝ մինչև Մառի պեղումները, Թորամանյանը բանասեր Կ.Բաումաջյանի հետ գնացել էր Անի՝ ձարտարապետական հուշարձանների ալբոմ կազմելու մտադրությամբ:

Նամակ⁸⁷ Արշակ Պապյանից⁸⁸ Հովհաննես Թումանյանին

Ալավերդի – Թիֆլիս

1913 հոկտեմբերի 25

Սիրելի Հովհաննես.

Լավ զավակներ շատ է ունեցել մեր Լոռին, եկեղեցուն, գիւրոթյանը, ազգին ու հասարակոթյանը մեծ մարդիկ է րովել մեր փոքրիկ անկյունը, բայց Ջավարյանց Սիմեոնը իր տեսակի մեջ միակն է, նա մեր եզակի զավակն է: Թողած րոնն ու րեղ, արհամարհելով աշխարհիս փառքն ու վայելչոթյունը, նա որպես մի մարգարե, ցոպը ձեռին, քարեքար, չոլեչոլ ընկած, ամայի անապատում քարոզում էր մեծ ուսուցչի պատրվերը. «Սիրեցցե զը ընկեր քո, իբրև զանձն քո»:

Ջոյումի աշխարհը մերավ նա վառ հոյսերով, մեծ հավատով: Բայց նա էլ ընկավ կիսաձանկին, համեստ ցոպը ձեռքին, առանց վիարելո: Նա զոհեց իր անձը ընկերոջ սիրո համար: Ընկավ՝ հեռու սիրելիներից, ընկավ մեր դարիք եղբայրը՝ կարոտ մեր սարերին ու լեռների: Մենք էլ, սիրելի բանասարեղծս, նրա սիրած լեռներից ու անրատներից աշնան թառամած ծաղիկներ քաղենք ու դնենք նրա թառամած ձակարին, թող կարոտն առնի նա իր սիրած Լոռու, իր կարոտ աշխարհի:

Թող նրա անուշ մոր, սիրասուն քոյրերի ու եղբոր սրտերը մխիթարի հայ ժողովրդի այն բռուն արտահայտոթյունը, որ լավում է աշխարհիս ամեն անկյունից նրանց ազիզ դարիքի վաղաժամ մահվան առթիվ: Նամակս թրջում եմ արտասուքով ու մնամ սլարած, մոլորած:

Բո Ա. Պապյան»:

87 Նամակը հրատարակվում է առաջին անգամ: Ինքնագիրը պահվում է Եղիշե Չարենցի անվան Գրականոթյանն ու արվեստի թանգարանի (ԳԱԹ) Թումանյանի ֆոնդում (ԹՖ), N 1935 (հին համարը՝ 966):

88 Արշակ Պապյանի անձը պարզել չհաջողվեց. Թումանյանի արխիվում բազմաթիվ են նամակները, որոնց հեղինակները գրական-հասարակական կյանքում որևէ դերակատարոթյուն չեն ունեցել ու չեն եղել նաև նրա մտերիմ-բարեկամների կամ հարազատների թվում: Իբրև ժամանակի համար հայտնի անուն ու անառարկելի հեղինակոթյուն՝ բանաստեղծին դիմում էին բազմաթիվ անձանոթներ, ցանկացած պահի ու ցանկացած հարցով: Ըստ ամենայնի Արշակ Պապյանը այն մտավորականներից է, ով ապրելով Լոռիում՝ ականատես էր եղել իր երկու մեծ հայրենակիցների գործունեոթյանը, նաև՝ նրանց մտերմոթյանը ու որոշել էր Ջավարյանի մահվան վիշտը կիսել իր մեծ հայրենակցի հետ: Այդ է վկայում նաև այն, որ նամակում բացի իր վիշտն արտահայտող խոսքերից, Թումանյանի ու նրա հետ որևէ առնչոթյան մասին վկայող որևէ այլ նախադասոթյուն չկա:

MEETINGS OF THE GREATS

**Part II. Hovhannes Tumanyan and the ideological heritage
of Simon Zavaryan**

Susanna G. Hovhannisyan

ԳՆԱԿԱՏՈՒՄԵՐ

In the early 20th century there was a strong need for people who would dedicate themselves to the Armenian culture, national liberation and struggle for life. And they didn't keep waiting. Two of them were Tumanyan and Zavaryan, the greatest Armenians of that epoch, whose joint efforts for the prosperity of the national culture and ideological heritage were due to the similarity of their temper and moral values. The best documentation of their struggle and common attitude towards the issues of the Armenian studies is their correspondence, especially the letters of Zavaryan addressed to Tumanyan on May 27 and September 22, 1913 (Charents Museum of Literature and Arts, N978), which have never been made public, as well as some other relating to the outstanding ARF figure (the letter of Arshak Papyan, Charents Museum of Literature and Arts, N966) which will also be presented to the society for the first time. They put a new slant on life and work of Zavaryan, and in particular on the history of his album's creation entitled «Armenian and Armenia» or «Work of the Armenian», which is his research concerning the science of the country, some new details of Zavaryan's scientific activity and the destiny of his research were also revealed in the letters.

The article presents a nationwide population response on the occasion of unexpected death of Zavaryan and his lively commemoration by the society. We have examined also two valuable articles of Tumanyan dedicated to Zavaryan – «Honest and Sincere» and «some character traits of Zavaryan», where the artist created the real and vivid image of Zavaryan, as a public figure and as just a human.

A so far unknown poem of Tumanyan, which was read in Berlin during the event dedicated to the memory Zavaryan is published for the first time.

հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013
հոկտեմբեր-դեկտեմբեր, 4 (44)

Ե (ՃԵ) քաղի, թիվ 4
ՀԷՄ համահայկական հանդես